

2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

I. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել՝

1) «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

2) Առևտրի համաշխարհային կազմակերպության Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման համաձայնագրի պահանջները՝ ազգային ստանդարտների ներդաշնակեցումը միջազգային և եվրոպական ստանդարտներին.

3) «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությանը հավանություն տալու մասին» N 1693-Ն որոշումը.

5) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ընտրված ոլորտների օրենսդրությունը Եվրամիության մակարդակում կանոնակարգվող արդյունաբերական ոլորտների օրենսդրությանը մոտարկման ծրագիրը հաստատելու մասին» N 1162-Ա որոշումը.

6) Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի հունիսի 26-ի ՆԿ-97-Ն կարգադրության 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգի դրույթները.

7) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի դրույթներն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցնելու միջոցառումների իրականացման ծրագիրը հաստատելու մասին» N 948-Ն որոշումը.

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի N 51 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած՝ Գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների ծրագիրը.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի «Մենդային հավելումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 993-Ն որոշումը.

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշումը.

11) «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխությունները.

12) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 1400-Ն որոշումը.

13) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Մինիստրիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1647-Ն որոշումը.

14) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների համապատասխան ոլորտները ներկայացնող շահագրգիռ կազմակերպությունների մասնագետներից կազմված՝ Ստանդարտացման 15 տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունները.

15) միջազգային ստանդարտացման աշխատանքների արդյունքները:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼ ՎՈՂ ԱՐԳՑՈՒՆՔՆԵՐԸ

2. Ծրագրի նպատակներն են՝

- 1) նպաստել միջազգային լավագույն փորձի և գիտելիքների տարածմանը.
- 2) աջակցել տնտեսության տարբեր ճյուղերում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը.
- 3) նպաստել սպառողական շուկայում արտադրանքի անվտանգության ապահովմանը.
- 4) հայրենական արտադրանքի որակի և մրցունակության բարձրացումը.
- 5) տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման ապահովումը.
- 6) միջազգային (տարածաշրջանային) ստանդարտների մշակման ժամանակ Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության ապահովումը.
- 7) արտաքին շուկայում արտահանման ծավալների ընդլայնումը.
- 8) այլ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական կապերի բարելավումը.
- 9) ստեղծել միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ.

10) հավաստի և պատշաճ տեղեկատվության տրամադրում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին և կազմակերպություններին:

3. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները՝

1) ազգային ստանդարտների մշակում և կիրառումը՝

ա. Հայաստանի Հանրապետության խորհրդանշանների (պետական դրոշի և զինանշանի) պատրաստման որակի բարձրացում,

բ. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների համար բարենպաստ պայմանների ստեղծում տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի արդյունավետ ներդրումների համար,

գ. շինարարության որակի և անվտանգության ապահովում՝ շինանյութերի (բետոնի և շինարարական շաղախների) ճշգրիտ ժամանակակից փորձարկման մեթոդների ներդրման միջոցով,

դ. անդամթերքի և գյուղատնտեսական արտադրության ոլորտում գործարարների համար բարենպաստ պայմանների ստեղծում արտահանման ծավալներն ավելացնելու համար, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման ապահովում,

ե. ներմուծվող և արտահանվող խաղալիքների որակի և անվտանգության բարձրացում, ինչպես նաև խաղալիքների տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման ապահովում,

զ. շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում հողի որակի բարձրացում սանիտարահիգիենիկ նորմերի ճշգրիտ փորձարկման մեթոդների կիրառման միջոցով,

է. մակերևութային ջրերում որակական ցուցանիշների (մանրէաբանական) բարելավում՝ դրանց փորձարկման ճշգրիտ մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև շշակցված խմելու ջրերի և հանքային ջրերի որակի և մրցունակության բարձրացում,

ը. քաղաքացիական պաշտպանության ոլորտում անհատական պաշտպանական միջոցների սարքինության ստուգման կարգավորման ապահովում,

թ. Հայաստանի Հանրապետության կազմակերպություններում կառավարման համակարգերի արդյունավետ ներդրում:

2) միջազգային ստանդարտներին ազգային ստանդարտների ներդաշնակեցման մակարդակի բարձրացումը կխթանի՝

ա. Հայաստանի Հանրապետության տնտեսությունում նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը,

բ. հայրենական արտադրանքի մրցունակության և շահութաբերության բարձրացմանը,

գ. ոչ հիմնավորված տեխնիկական խոչընդոտների վերացմանը՝ ապահովելով ազատ առևտուր,

դ. համապատասխանության գնահատման համար բիզնեսի ծախսերի նվազեցմանը.

3) ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցությունը. ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցությունը և աշխատանքների կազմակերպման ծրագիրը հնարավորություն է տալիս մասնակցելու Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ), Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՄԵՆ) և ԱՊՀ ստանդարտացման միջպետական խորհրդի և դրանց ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին, կիրառել այդ կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտները, ներկայացնել նրանց կողմից մշակված ստանդարտների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության շահագրգիռ մարմինների և Ստանդարտների ազգային ինստիտուտի առաջարկությունները՝ դրանով նպաստելով հայրենական արտադրողների կողմից արտադրված և մատուցված ծառայությունների արտահանմանն ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային (Եվրամիության և ԱՊՀ երկրներ) շուկաներ: Բացի դրանից, հանդիսանալով միջազգային ստանդարտացման

նշված կազմակերպությունների անդամ, Ստանդարտների ազգային ինստիտուտը պարտավոր է անմասն չմնալ այդ կազմակերպությունների աշխատանքից և ակտիվորեն մասնակցել հրավիրվող խորհրդակցություններին և տարեկան վեհաժողովներին: Այդպիսի մասնակցությունը բարձրացնում է Հայաստանի Հանրապետության հեղինակությունը միջազգային ասպարեզում և ամեն անգամ թույլ է տալիս հիմք դնել տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ նոր շահավետ համագործակցության:

4) ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքները՝

ա. Ստանդարտների ազգային ֆոնդի համալրման և վարման աշխատանքները, ըստ ծրագրի, հնարավորություն են տալիս Հայաստանի Հանրապետությանն ունենալու միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ: Մասնավորապես, ակնկալվում է ազգային ֆոնդը համալրել շուրջ 87 ազգային ստանդարտներով՝ ներդաշնակ միջազգային և եվրոպական ստանդարտներին: Ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացման արդյունքում ազգային ստանդարտների ներդաշնակեցման մակարդակը միջազգային և եվրոպական ստանդարտներին կկազմի 37 տոկոս,

բ. 2012 թվականի իրականացվելու են միջոցառումներ, որոնց արդյունքում ազգային ֆոնդը համալրվելու է շուրջ 1500 միջազգային (ԻՍՕ), 1300 եվրոպական (ԵՆ), 1200 միջպետական (ԳՕՍՏ) և ՌԴ-ի ստանդարտներով (ԳՕՍՏ Ռ),

գ. ստանդարտացման բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ տեղեկատվական սպասարկման աշխատանքները տնտեսության տարբեր ճյուղերում պետք է ապահովվեն անհրաժեշտ և պահանջված ստանդարտներով, խորհրդատվությամբ և տեղեկատվությամբ:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4. Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1) ազգային ստանդարտները միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակեցումը.

2) ազգային ստանդարտների մշակումը շահագրգիռ կազմակերպությունների ընդգրկման միջոցով.

3) ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ ստանդարտացման աշխատանքների ակտիվացումը.

4) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվական աշխատանքների ծավալի ընդլայնումը:

IV. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5. Ստանդարտացման աշխատանքները՝

1) ստանդարտների մշակման ծառայությունների ծրագիրը ձևավորվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա: Ծրագրում նախատեսվել է միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների հիման վրա 88 ազգային ստանդարտների նախագծերի մշակում: Ազգային ստանդարտների նախագծերի մշակումը ծրագրով նախատեսվում է իրականացնել տնտեսության և արդյունաբերության հետևյալ ոլորտների համար՝

ա. պետական խորհրդանշանների (դրոշի և զինանշանի) արտադրություն,

բ. տեղեկատվական տեխնոլոգիաներ,

գ. հեռահաղորդակցություն,

դ. շինանյութերի արտադրանք,

ե. խաղալիքների անվտանգություն,

- զ. քիմիական արտադրանք,
- է. կոսմետիկական արտադրանք,
- ը. շրջակա միջավայրի պաշտպանություն,
- թ. սննդամթերքի և գյուղատնտեսական մթերքի արտադրանք,
- ժ. ջրի որակ,
- ժա. կառավարման համակարգեր,
- ժբ. որակի համակարգեր,
- ժգ. արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտ,
- ժդ. ընկերությունների կազմակերպում և ղեկավարում.

2) պետական խորհրդանշանների (դրոշի և զինանշանի) պատրաստման որակը բարձրացնելու համար անհրաժեշտություն է առաջացել սահմանել չափերի, գույների, օգտագործվող նյութերի և այլ ցուցանիշների վերաբերյալ միասնական տեխնիկական պահանջներ.

3) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության առաջարկության հիման վրա ծրագրով նախատեսվում է մշակել ազգային ստանդարտներ պետական դրոշի և զինանշանի վերաբերյալ, որոնց կիրառումը կապահովի տարբեր ոլորտներում դրանց միասնականությունը և որակը.

4) Հայաստանի Հանրապետության նախագահի 2009 թվականի հունիսի 26-ի ՆԿ-97-Ն կարգադրության 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայացակարգի դրույթներով նախատեսված ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով և Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության խորհրդի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության առաջարկությունների հիման վրա ծրագրով նախատեսվում է շարունակել մշակել տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի ազգային ստանդարտները՝ համապատասխան (տյնական) ԻՍՕ/ԻԷԿ 27004 և

ԻՍՕ/ԻԷԿ 27006 միջազգային ստանդարտներին: ԻՍՕ/ԻԷԿ 27000 շարքի ստանդարտների կիրառումը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում և կազմակերպություններում կապահովի տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի արդյունավետ ներդրումը՝ տեղեկատվական պաշտպանության միջոցների որակի բարձրացմամբ.

5) թվային հեռարձակման ոլորտի ազգային ստանդարտի մշակումը՝ ներդաշնակ հեռահաղորդակցության եվրոպական ստանդարտների ինստիտուտի (EPSI) կողմից մշակված ստանդարտներին, կնպաստի Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցնելու միջոցառումների ծրագրի ապահովմանը.

6) ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ընտրված ոլորտների օրենսդրությունը Եվրամիության մակարդակում կանոնակարգվող արդյունաբերական ոլորտների օրենսդրությանը մոտարկման ծրագիրը հաստատելու մասին» N 1162-Ա որոշման՝ նախատեսվում է մշակել խաղալիքների անվտանգության վերաբերյալ ազգային ստանդարտներ՝ ներդաշնակ եվրոպական ստանդարտներին: Այդ ստանդարտների կիրառումը կոչված է ապահովելու Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2009 թվականի հունիսի 18-ի N 2009/48/ԵՀ հրահանգին ներդաշնակ՝ Հայաստանի Հանրապետության մշակվող խաղալիքների տեխնիկական կանոնակարգի պահանջները: Ստանդարտների կիրառումը կնպաստի ներմուծվող և արտահանվող խաղալիքների որակի և մրցունակության բարձրացմանը.

7) ծրագրով նախատեսված քիմիական արտադրանքի համար ստանդարտների մշակումը կապահովի սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը և «կաուչուկ», «ներկեր» և «լաքեր» արտադրատեսակների մրցունակության բարձրացումը.

8) ծրագրով նախատեսված է ազգային ստանդարտների մշակում սննդամթերքի արտադրության և գյուղատնտեսության ոլորտում, որոնց հիմնական նպատակը սննդամթերքի և գյուղատնտեսական ապրանքների անվտանգությունը և որակն ապահովելն է: Մասնավորապես, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 993-Ն որոշման 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N 1522-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի 3.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության առաջարկության հիման վրա նախատեսվում է մշակել մասնաթերքում, կաթնամթերքում և պտուղ-բանջարեղենի վերամշակման մթերքներում օգտագործվող սննդային հավելումների, առկա թունավոր տարրերի, գենետիկորեն ձևափոխված մարմինների որոշման արդիականացված մեթոդներ՝ ներդաշնակ միջազգային պահանջներին:

9) քաղաքաշինության բնագավառում շինանյութերի արտադրությունում գործող ստանդարտները և այլ նորմատիվային փաստաթղթեր ներկայումս չեն համապատասխանում միջազգային և եվրոպական ստանդարտներին: Նոր տնտեսական հարաբերություններում շինանյութերի արտադրության որակը և մրցունակությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է արդիականացնել գործող ստանդարտները:

10) շինանյութերի արտադրությունում միջազգային և եվրոպական նորմերին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակումը կլիթանի հայրենական արտադրությունը և արտահանումը միջազգային շուկա, կնպաստի շինարարական արտադրանքների պատրաստման ինովացիոն տեխնոլոգիաների զարգացմանը և շինանյութերի արտադրության որակի և անվտանգության բարձրացմանը:

11) ծրագրով նախատեսվում է մշակել բետոնների և շինարարական շաղախների հավելույթների համար ազգային ստանդարտներ՝ ներդաշնակ եվրոպական նորմերին,

որոնք պետք է սահմանեն առաջադեմ տեխնիկական պահանջներ, մակնշման և պիտակավորման պահանջներ և փորձարկման մեթոդներ.

12) ծրագրով նախատեսվում է նաև մշակել թարմ պատրաստված բետոնե խառնուրդների, պնդացած բետոնի և կոնստրուկցիաներում բետոնի փորձարկման մեթոդներ.

13) նշված ազգային ստանդարտների մշակման համար հիմք է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի N 51 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած՝ Գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների ծրագիրը.

14) շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում նախատեսվում է մշակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՏՀ 14 «Շրջակա միջավայրի կառավարում» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի առաջարկությամբ ազգային ստանդարտներ, որոնք պետք է կանոնակարգեն մանրէաբանական ցուցանիշների և թունավոր տարրերի որոշման մեթոդը: Այդ ստանդարտների կիրառումը թույլ կտա ճշգրիտ գնահատել հողի սանիտարահիգիենիկ նորմերը.

15) ՏՀ 14 «Շրջակա միջավայրի կառավարում» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի առաջարկությամբ նախատեսվում է մշակել միջազգային ստանդարտներին համապատասխան ազգային ստանդարտներ, որոնք կանոնակարգելու են տեղամասերի և կազմակերպությունների էկոլոգիական գնահատման գործընթացը և էկոլոգիական կառավարման համակարգի ներդրման փուլերի կարգը.

16) ծրագիրը նախատեսում է մշակել ազգային ստանդարտ մակերևութային ջրերում և կեղտաջրերում որոշ սանիտարահիգիենիկ նորմերի փորձարկման մեթոդների վերաբերյալ՝ ներդաշնակ միջազգային (ԻՍՕ) ստանդարտներին: Նախատեսվում է նաև մշակել աղբյուրի և հանքային ջրերում թունավոր տարրերի որոշման ժամանակակից մեթոդներ: Նշված ստանդարտների կիրառումը կապահովի կեղտաջրերում սանիտարահիգիենիկ

վիճակի ճշգրիտ և պատշաճ գնահատումը: Նշված ստանդարտների կիրառումը կապահովի շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի կատարումը: Շշալցված աղբյուրի և հանքային ջրերի համար ստանդարտների կիրառումը կնպաստի որակի և մրցունակության բարձրացմանը և տեխնիկական խոչընդոտների նվազեցմանն արտահանման գործընթացում:

17) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում և Հայաստանի Հանրապետության կազմակերպություններում կառավարման համակարգերի արդյունավետ կիրառման նպատակով «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության նախաձեռնությամբ նախատեսվում է մշակել միջազգային ստանդարտներ:

18) նախատեսվում է նաև վերանայել որակի կառավարման համակարգերի ազգային ստանդարտները և համապատասխանեցնել նոր ընդունված միջազգային (ԻՍՕ) ստանդարտներին:

19) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության առաջարկությամբ նախատեսվում է մշակել անտառային հրդեհների կանխարգելման նպատակով ազգային ստանդարտ, որը պետք է սահմանի անտառային հրդեհների մոնիթորինգի և կանխատեսման պահանջները:

20) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի առաջարկությամբ նախատեսվում է վերանայել անշարժ գույքի գնահատման ազգային ստանդարտը (ՀՍ 252-2006) և այն համապատասխանեցնել «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

21) ծրագիրը նախատեսում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայության առաջարկությամբ փոփոխություն կատարել ՀՍ 110-2006 «Տրանսպորտային միջոցների հաշվառման համարա-

նիշեր. Տիպեր և հիմնական չափեր. Տեխնիկական պահանջներ և շահագործման վերաբերյալ ցուցումներ» ազգային ստանդարտում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 1400-Ն որոշմամբ սահմանված պահանջները.

22) ծրագիրը նախատեսում է մշակել քաղաքացիական պաշտպանության ոլորտի ազգային ստանդարտ, որը կկարգավորի հակազագերի և շնչադիմակների համար նախատեսված գոհիչ տուփերի ստուգման մեթոդը:

6. Միջազգային և եվրոպական ստանդարտացման համագործակցության ընդլայնումը. ստանդարտների ազգային ինստիտուտը 1997 թվականից Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) լիիրավ և 2007 թվականից Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՄԵՆ) գործընկեր և 2008 թվականից՝ միացող անդամ է: Մասնակցում է Ստանդարտացման միջազգային կազմակերպության 38 տեխնիկական հանձնաժողովի և ենթահանձնաժողովների, քաղաքականության մշակման 3 հանձնաժողովի, Ստանդարտացման եվրոպական կոմիտեի 3 հանձնաժողովի աշխատանքներին: Միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծերի քննարկման կարևորագույն փուլերում ինստիտուտի մասնակցությունն ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է նշված հեղինակավոր կազմակերպությունների ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների մասնակցության ընդլայնում: Հաշվի առնելով երկրի տնտեսության զարգացման գերակա ուղղությունները՝ անհրաժեշտ է ակտիվացնել միջազգային ստանդարտացման աշխատանքները տնտեսության այդ ոլորտներն ընդգրկող տեխնիկական հանձնաժողովներում: Այս տեխնիկական հանձնաժողովներում աշխատանքների ակտիվացումը կնպաստի միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքի ձևավորմանը, Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման անհրաժեշտության հիմնավորմանը: Միջազգային և եվրոպական ստանդարտների ընդունման գործընթացում

ստանդարտների քննարկման և ընդունման շրջան ամբողջական դարձնելու նկատառումով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել համանման տեխնիկական հանձնաժողովներ: Այս ստանդարտացման հանձնաժողովներում իրենց համաձայնությամբ կընդգրկվեն պետական կառավարման, գիտական ինստիտուտների, հասարակական կազմակերպությունների, արտադրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք կաշխատեն միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծերի փորձաքննության և հանձնաժողովներում դրանց կիրառման հնարավորությունների գնահատման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում, կմշակվեն այդ ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտներ:

7. Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կատարելագործում՝

1) ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման համար ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա. ազգային ֆոնդի համալրման, հաշվառման և վարման աշխատանքների կազմակերպում և իրականացում,

բ. ստանդարտների էլեկտրոնային տվյալների բազայի վարում՝ «Ստանդարտ» տեղեկատվական որոնման ավտոմատացված համակարգի միջոցով,

գ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին և կազմակերպություններին ստանդարտների և տեղեկատվության տրամադրման աշխատանքների կազմակերպում,

դ. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային տարբերակի) ստեղծման, հաշվառման և պահման աշխատանքների կազմակերպում,

ե. ստանդարտների տվյալների հիմնապաշարից սպառողների (օգտագործողների) օգտվելու հնարավորության և ինտերնետի միջոցով ստանդարտների էլեկտրոնային վաճառքի մեխանիզմների ներդրում,

զ. ստանդարտացման միջազգային կազմակերպության, Ստանդարտացման եվրոպական կոմիտեի և ԱՊՀ միջպետական խորհրդի շրջանակներում գործող տեղեկատվական համակարգերի ինտեգրման աշխատանքների զարգացում (ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստացում, շահագրգիռ կողմերին ապահովում, էլեկտրոնային քվեարկություն և այլն),

է. Առևտրի համաշխարհային կազմակերպության առևտրում տեխնիկական խոչընդոտների հարցման կետի աշխատանքների ակտիվացում:

Վ. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանն ամրագրված ծառայությունները ֆինանսավորվում են՝ համաձայն «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացնել 14,000.0 հազ. դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ց Ա Ն Կ

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ծրագրով նախատեսված աշխատանքների			2012 թվականի ֆինանսավորման սահմանագումարը (հազ. դրամ)				
	մշակման ենթակա ստանդարտների անվանումները	ստանդարտացման նորմատիվ փաստաթղթի մշակման նպատակը	աշխատանքի վերջնական արդյունքը	առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
1	2	3	4	5	6	7	8
Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ	ՀՀ պետական դրոշ. Տեխնիկական պայմաններ ՀՍ Ազգային ստանդարտի մշակում (ՀՍ 50-94 ստանդարտի վերանայում)	ՀՀ պետական դրոշի միասնական որակական ցուցանիշների, պահանջների և չափերի սահմանում	ստանդարտների մշակում				
	ՀՀ պետական զինանշան. Տեխնիկական պահանջներ ՀՍ Ազգային ստանդարտի մշակում	ՀՀ պետական զինանշանի միասնական որակական ցուցանիշների, պահանջների և չափերի սահմանում					
	Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեթոդներ. Տեղեկատվական անվտանգության կառավարում. Չափումներ Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ/ԻԷԿ 27004 ստանդարտին ներդաշնակ	- Տեղեկատվական անվտանգության պահանջների մշակման ժամկետի կրճատում, - տեղեկատվության անվտանգության միջոցառումների արդյունավետության ճշտության և հավաստիության բարձրացում, - կազմակերպության կառավարման միասնական համակարգի ստեղծման նյութական ծախսերի կրճատում, - տեղեկատվության պաշտպանության միջոցների որակի և մրցունակության բարձրացում					

1	2	3	4	5	6	7	8
<p>Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ</p>	<p>Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Բաց համակարգերի փոխազդեցություն. Բարձր մակարդակների անվտանգության մոդել Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ/ԻԷԿ 10745 ստանդարտին ներդաշնակ</p> <p>Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին ներկայացվող պահանջներ ԻՍՕ/ԻԷԿ 27006-2012 ազգային ստանդարտի մշակում (ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 27006-2009 վերանայում) Ներդաշնակեցում ԻՍՕ/ԻԷԿ 27006-2011 հետ</p>	<p>Տեղեկատվական անվտանգության համակարգերի կիրառման և ծրագրային միջոցների արդյունավետության ցուցանիշների բարձրացում</p> <p>- Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջների սահմանում</p>	<p>ստանդարտների մշակում</p>				
<p>Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ</p>	<p>ԹՎային վիդեո հեռարձակում (DVB). Անլար կապի համակարգի միջոցով կատարելագործված թվային հեռարձակման ինտերակտիվ ալիք (DECT) Ազգային ստանդարտի մշակում ETSI ETR 301 193 ստանդարտին ներդաշնակ</p> <p>Խաղալիքների անվտանգություն. Մաս 1. Մեխանիկական և ֆիզիկական հատկություններ</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 71-1-2011 ստանդարտին ներդաշնակ</p> <p>Խաղալիքների անվտանգություն. Մաս 2. Բոցավառելիություն Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 71-2-2011 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Ներդաշնակ ստանդարտի ընդունում, որը կապահովի անցումը թվային հեռահաղորդակցման միջազգային մակարդակին</p> <p>Ներմուծվող և արտահանվող խաղալիքների որակի և մրցունակության բարձրացում</p> <p>Ներմուծվող և արտահանվող խաղալիքների որակի և մրցունակության բարձրացում</p>	<p>ստանդարտների մշակում</p>				

1	2	3	4	5	6	7	8
<p>Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ</p>	<p>Խաղալիքների անվտանգություն. Մաս 8. Խաղալիքների ակտիվությունը տնային օգտագործման համար</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 71-8-2011 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Ներմուծվող և արտահանվող խաղալիքների որակի և մրցունակության բարձրացում</p>	<p>ստանդարտների մշակում</p>				
	<p>Էլեկտրական խաղալիքներ. Անվտանգություն</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 62115-2005 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Ներմուծվող և արտահանվող խաղալիքների որակի և մրցունակության բարձրացում</p>					
	<p>Ներկեր և լաքեր. Փորձարկումներ չորացման ընթացքում. Մաս 1. Ամբողջ հաստությամբ լրիվ չորացման վիճակի և դրան հասնելու ժամանակի որոշում</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 9117-1-2009 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Արտադրանքի մրցունակության բարձրացում փորձարկման մեթոդներին ներդաշնակեցման միջոցով և «Մինիթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովելու նպատակով</p>					
<p>Կաուչուկ. Ֆիզիկական հատկությունների փորձարկման համար փորձարկման նմուշների պատրաստման և լավորակման ընդհանուր մեթոդներ</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 23529-2010 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Կաուչուկի արտադրության մրցունակության բարձրացում, կաուչուկի որակի միջազգային փորձարկման մեթոդների ներդրում</p>						
<p>Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ</p>	<p>Ներկեր և լաքեր. Պատման գործընթացի հետ կապված պատվածքների համակարգերի հատկությունների գնահատում. Մաս 2. Գույնի կայունություն, ծածկունակություն, կրկնական լուծում, փոշեպատման ավելցուկի կլանում, թրջում, մակերևույթի կազմվածք (տեքստուրա) և խայտավորվածք</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 28199-2-2009 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Արտադրանքի մրցունակության բարձրացում փորձարկման մեթոդներին ներդաշնակեցման միջոցով և «Մինիթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովելու նպատակով</p>	<p>ստանդարտների մշակում</p>				

1	2	3	4	5	6	7	8
	<p>Կոսմետիկա. Պատշաճ Արտադրական Գործելակարգ (ՊԱԳ). Պատշաճ Արտադրական Գործելակարգի վերաբերյալ ղեկավար ցուցումներ</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 22716:2007 ստանդարտի պահանջներին ներդաշնակ</p>	<p>Կոսմետիկական արտադրության որակի բարձրացում Պատշաճ արտադրական գործելակարգի (GMP) ներդրման միջոցով</p>					
	<p>Կոսմետիկա. Վերլուծական մեթոդներ. Նիտրոգամիններ. Կոսմետիկայում նիտրոգեղձեթանոլամինի (ՆԵԷԼԱ) հայտնաբերում և որոշում բարձրարդյունավետ հեղուկ քրոմատագրման մեթոդով զանգվածա-սպեկտրաչափական հայտնաբերման հետ միաժամանակ (HPLC-MS-MS)</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 15819:2008 ստանդարտի պահանջներին ներդաշնակ</p>	<p>Կոսմետիկական արտադրանքի փորձարկման միջազգային մեթոդների ներդրում արտադրանքների մրցունակության բարձրացման նպատակով</p>					
<p>Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ</p>	<p>Կոսմետիկա. Վերլուծական մեթոդներ. Նիտրոգեղձեթանոլամինի (ՆԵԷԼԱ) հայտնաբերում և որոշում բարձրարդյունավետ հեղուկ քրոմատագրման մեթոդով, աշտարակում ֆոտոլիզ և ածանցյալների գոյացում</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 10130:2009 ստանդարտի պահանջներին ներդաշնակ</p>	<p>Փորձարկման մեթոդների ներդաշնակեցում արտադրանքների մրցունակության բարձրացման նպատակով</p>	<p>ստանդարտների մշակում</p>				
	<p>Կոսմետիկա. Վերլուծական մեթոդներ. Կոսմետիկայում ծանր մետաղի որոշում</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ /NP TR 172761 ստանդարտի պահանջներին ներդաշնակ</p>	<p>Կոսմետիկական արտադրանքի անվտանգության ապահովում</p>					

1	2	3	4	5	6	7	8
	<p>Հավելություններ բետոնների և շինարարական շաղախների համար. Մաս 1. Ընդհանուր պահանջներ</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 934-1 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Բետոնների և շինարարական շաղախների համար հավելությունների պահանջների ներդաշնակեցում եվրոպական նորմերին՝ արտադրանքի մրցունակության բարձրացման նպատակով</p>					
	<p>Հավելություններ բետոնների և շինարարական շաղախների համար. Մաս 2. Բետոնի հավելանյութեր. Սահմանումներ, տեխնիկական պահանջներ, համապատասխանություն, մակնշում և պիտակավորում</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 934-2 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Բետոնների հավելությունների սահմանումների և տեխնիկական պահանջների, մակնշումների ներդաշնակեցում եվրոպական նորմերին՝ արտադրանքի մրցունակության բարձրացման նպատակով</p>					
<p>Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ</p>	<p>Հավելություններ բետոնների և շաղախների համար. Մաս 5. Տրոկրետբետոնի հավելանյութեր. Սահմանումներ, տեխնիկական պահանջներ, համապատասխանություն, մակնշում և պիտակավորում</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 934-5 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Տրոկրետբետոնի հավելությունների սահմանումների և տեխնիկական պահանջների, մակնշումների ներդաշնակեցում եվրոպական նորմերին՝ արտադրանքի մրցունակության բարձրացման նպատակով</p>	<p>ստանդարտների մշակում</p>				
	<p>Հավելություններ բետոնի և շինարարական շաղախների համար. Մաս 6. Նմուշառում. Համապատասխանության հսկողություն և համապատասխանության գնահատում</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 934-6 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Բետոնի և շինարարական շաղախների համար հավելությունների նմուշառման . համապատասխանության հսկողության և համապատասխանության գնահատման գործընթացի ներդաշնակեցում եվրոպական նորմերին</p>					
	<p>Հավելություններ բետոնների և շինարարական շաղախների համար. Փորձարկման մեթոդներ. Մաս 1. Փորձարկման համար փորձանմուշային բետոն և շինարարական շաղախ</p> <p>Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 480-1 ստանդարտին ներդաշնակ</p>	<p>Փորձարկման մեթոդների ներդաշնակեցում արտադրանքների մրցունակության բարձրացման նպատակով</p>					

1	2	3	4	5	6	7	8
